



**USAID**  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



**Internews**



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

**ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ  
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ  
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ**

**ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ  
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ  
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

**Մշտադիտարկումը նպատակ ունի պարզելու, թե Հայաստանյան լրատվամիջոցներում որքանով են պահպանվել՝**

- քարոզարշավի լուսաբանման հավասարակշռությունը,
- հանրությանը ներկայանալու հավասար հնարավորությունները,
- լրագրողական էթիկայի նորմերը:

*Մշտադիտարկումն իրականացվել է Ամերիկայի ժողովրդի առատաձեռն աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով իրականացվող «Հայաստանի մեդիայի զարգացման ծրագրի» շրջանակում: Ծրագիրն իրականացնում է «Ինտերնյուս» կազմակերպությունը՝ Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի, Երեւանի մամուլի ակումբի եւ «2ինք» միջազգային կազմակերպության հետ համատեղ: Բովանդակության համար պատասխանատու է միմիայն ծրագիրն իրականացնող կազմակերպությունը, եւ այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:*

# Բովանդակություն

Երեւանի ավագանու 2023թ. սեպտեմբերի 17-ի ընտրությունների արդյունքները .....	5
Մշտադիտարկման նպատակները եւ մեթոդաբանությունը .....	7
Մշտադիտարկման առարկա լրատվամիջոցները .....	11
Մշտադիտարկման ամփոփ եւ թվային արդյունքները .....	13
<b>Դիտարկումներ</b> - Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցող որ քաղաքական ուժերին են առավել հաճախ անդրադարձել - Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցող որ քաղաքական ուժերն են առավել հաճախ արժանացել դրական եւ բացասական անդրադարձի: .....	13
<b>Դիտարկումներ</b> - Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավի, «լռության օրը» եւ ընտրությունների օրը ինչ թեմատիկ շեշտադրումներ են գերակշռել, երբ անդրադարձ է կատարվել քաղաքական ուժերին .....	18
<b>Դիտարկումներ</b> - Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավի, «լռության օրը» եւ ընտրությունների օրը լուսաբանման ժամանակ հաղորդավարների կողմից առավել դրական (ընդգծված համակրանք), բացասական (ընդգծված հակակրանք) եւ չեզոք (անկողմնակալ) վերաբերմունքի արժանացած քաղաքական ուժերը .....	22
<b>Դիտարկումներ</b> - Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավի, «լռության օրը» եւ ընտրությունների օրը լուսաբանման ժամանակ կիրառված վիրավորական կարծրատիպերը .....	21
<b>ՀԱՎԵԼՎԱԾ</b> .....	22
<b>Թվային տվյալներ</b> - Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցող որ քաղաքական ուժերին են առավել հաճախ անդրադարձել - Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցող որ քաղաքական ուժերին են առավել հաճախ դրական, բացասական, կամ չեզոք անդրադարձ կատարել .....	23
<b>Թվային տվյալներ</b> - Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավի, «լռության օրը» եւ ընտրությունների օրը ինչ թեմատիկ շեշտադրումներ են գերակշռել, երբ անդրադարձ է կատարվել քաղաքական ուժերին .....	33
<b>Թվային տվյալներ</b> - Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավի, «լռության օրը» եւ ընտրությունների օրը լուսաբանման ժամանակ հաղորդավարների կողմից առավել դրական (ընդգծված համակրանք), բացասական (ընդգծված հակակրանք) եւ չեզոք (անկողմնակալ) վերաբերմունքի արժանացած քաղաքական ուժերը .....	45

**Թվային տվյալներ**

- Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավի, «լռության օրը»

եւ ընտրությունների օրը լուսաբանման ժամանակ կիրառված

վիրավորական կարծրատիպերը ..... 48

## **| Երեւանի ավագանու 2023թ. սեպտեմբերի 17-ի ընտրությունների արդյունքները**

Երեւանի ավագանու 2023թ. սեպտեմբերի 17-ի ընտրություններին մասնակցել են 13 կուսակցություն եւ 1 դաշինք:

Ըստ օրենքի, եթե ընտրությունների արդյունքում որեւէ կուսակցություն կամ դաշինք ստանում է քվեարկությանը մասնակցած ընտրողների 50%-ից ավելի ձայնը, ապա այդ կուսակցության կամ դաշինքի ընտրական ցուցակի առաջին համարն օրենքի ուժով դառնում է քաղաքապետ: Եթե ոչ, քաղաքապետին ընտրում է Երեւանի ավագանին՝ իր կազմից:

Երեւանի ավագանի անցնելու համար կուսակցությունները պետք է հավաքեն առնվազն 4% քվե, իսկ դաշինքները՝ առնվազն 6%:

2023թ. սեպտեմբերի 24-ին Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակել է Երեւանի ավագանու 2023թ. սեպտեմբերի 17-ի ընտրությունների քվեարկության վերջնական արդյունքները:

Ընտրողների ընդհանուր թիվը եղել է 824 317: Քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը՝ 234 442, կամ ընդհանուրի 28.44%-ը: Անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 2 492:

Կուսակցություններին եւ դաշինքին տրված ձայները բաշխվել են հետեւյալ կերպ (ըստ ստացած քվեների քանակի)՝ տե՛ս Աղյուսակ 1:

**Աղյուսակ 1**

№	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանում (ցուցակի առաջին համարը)	Կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը	Ընդհանուր քվեների տոկոսային չափաբաժինը	Երեւանի 65 տեղանոց ավագանիում ստացած մանդատների քանակը
1.	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն (Տիգրան Ավինյան)	75 494	32.57%	24
2.	«Ազգային առաջընթաց» կուսակցություն (Հայկ Մարության)	43 797	18.89%	14
3.	«Մայր Հայաստան» դաշինք (Անդրանիկ Թեւանյան)	35 807	15.45%	12
4.	«Հանրապետություն» կուսակցություն (Արտակ Չեյնայան)	26 233	11.32%	8
5.	«Հանրային ծայն» կուսակցություն (Արտակ Գալստյան)	22 447	9.68%	7
6.	«Ապրելու երկիր» կուսակցություն (Մանե Թանդիլյան)	8 429	3.64%	0
7.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն (Դավիթ Խաժակյան)	4 178	1.80%	0
8.	«Հաղթանակ» կուսակցություն (Վիկտոր Մնացականյան)	3 960	1.71%	0
9.	«Արդար Հայաստան» կուսակցություն (Նորիկ Նորիկյան)	2 600	1.12%	0
10.	«Հայաստանի եվրոպական կուսակցություն» (Տիգրան Խզմայան)	2 569	1.11%	0
11.	«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն (Սուրեն Պետրոսյան)	2 345	1.01%	0
12.	«Ուժը հայրենյաց» կուսակցություն (Նելլի Հարությունյան)	1 708	0.74%	0
13.	«Միացյալ Հայաստան» կուսակցություն (Երվանդ Թարվերդյան)	1 277	0.55%	0
14.	«Հանուն սոցիալական արդարության» կուսակցություն (Արման Ղուկասյան)	781	0.34%	0

# | Մշտադիտարկման նպատակները եւ մեթոդաբանությունը

## **Մշտադիտարկման նպատակները**

1. Պարզել, թե **հավասարակշռության ինչ աստիճան է առկա** Երեւանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների քարոզարշավի լուսաբանման ժամանակ եւ որքանով են ապահովվում հավասար հնարավորությունները մասնակից քաղաքական ուժերի համար, որպեսզի նրանք կարողանան ներկայացնել իրենց ծրագրերը, դիրքորոշումները:

2. Ուրվագծել, թե **քարոզարշավի ժամանակ թեմատիկ ինչ շեշտադրումներ** (ընդհանուր քաղաքական հարցեր, Երեւան քաղաքի հիմնախնդիրներ եւ այլ) են կատարվել ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի (կուսակցություններ, դաշինքներ) լուսաբանման, ներկայացման ժամանակ:

3. Հասկանալ, թե քարոզարշավի լուսաբանման ժամանակ **որքանով են պահպանվել լրագրողական էթիկայի նորմերը**:

## **Մշտադիտարկման մեթոդաբանությունը**

Մշտադիտարկման առարկա են հանդիսացել հայաստանյան ութ լրատվամիջոցների հիմնական լրատվական ու բանավիճային («հյուրը ստուգիայում» ձեւաչափով հարցազրույց) մեկական հաղորդումները (այսինքն, մշտադիտարկման է ենթարկվել յուրաքանչյուր լրատվամիջոցի առնվազն երկու հեռուստահաղորդում): Եթե ութ լրատվամիջոցներից որեւիցե մեկը նշված հեռուստահաղորդումներից դուրս կազմակերպել է նախընտրական բանավեճ(եր) կամ իրականացրել է հատուկ նախընտրական հարցազրույց(ներ), դրանք նույնպես մշտադիտարկման առարկա են դարձել:

Ութ լրատվամիջոցներն են՝

1. «Արմենիա»,
2. «Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք»,
3. «Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք»,
4. «Հայկական երկրորդ հեռուստաալիք»,
5. «Երկիր Մեդիա»,
6. «Շանթ»,
7. «1in.am»,
8. «Factor.am»:

Լրատվամիջոցների ընտրությունը պայմանավորված է Հայաստանի քաղաքական դաշտում դրանց դիրքավորմամբ, ինչպես նաեւ բովանդակության հեռարձակման ձեւաչափերի բազմազանությամբ, քաղաքական իրադարձությունների նկատմամբ ուշադրությամբ եւ հանրային կարծիքի վրա ունեցած ավանդական ազդեցությամբ:

Մշտադիտարկման հիմնական միավորը հեռուստանյութն է: Հեռուստանյութ ասելով՝ հասկանում ենք լրատվական թողարկման առանձին սյուժեն (ռեպորտաժ եւ այլն) եւ բանավիճային ամբողջական հաղորդումը: Հաղորդման ընթացքում հնչած անոնսները, սյուժեին նախորդող հաղորդավարի խոսքը դիտարկվել են որպես տվյալ հեռուստանյութի մաս: Մշտադիտարկումից դուրս են մնացել քաղաքական ուժերի նախընտրական քարոզչության բլոկները, առեւտրային ու սոցիալական գովազդը, հայտարարությունները եւ դիտարկվող հեռուստահաղորդումների ժամանակ «վազող տողը»:

Մշտադիտարկումն իրականացվել է 2023 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 17-ը: Սեպտեմբերի 16-ի («լուռության օր») եւ սեպտեմբերի 17-ի (քվեարկության օր) մշտադիտարկման արդյունքներն ամփոփված են առանձին:

**1. Պարզելու համար, թե հավասարակշռության ինչ աստիճան է առկա քարոզարշավի լուսաբանման ժամանակ, եւ որքանով են ապահովվում հավասար հնարավորությունները մասնակից քաղաքական ուժերի համար, որպեսզի նրանք կարողանան ներկայացնել իրենց ծրագրերը, դիրքորոշումները՝ կիրառվել է հետեւյալ մեթոդաբանությունը.**

**1.1.** Լրատվական թողարկումներում՝ քաղաքական ուժին կամ նրա ցուցակի առաջին համարին (Երեւանի քաղաքապետի թեկնածու) անդրադարձ կատարելու հաճախականությունը (քանի անգամ են անդրադարձել տվյալ քաղաքական ուժին, հիշատակել այն՝ լրատվամիջոցի ներկայացուցիչը, ռեպորտաժի «հերոսը»), ներառյալ՝ ինչ բնույթի անդրադարձ է կատարվել (դրական, բացասական, չեզոք): Եթե մեկ հեռուստանյութի ընթացքում տվյալ քաղաքական ուժին (նաեւ առաջին համարին) անդրադարձել են մեկ եւ ավելի անգամ, ապա համարվել է, որ տվյալ քաղաքական ուժին անդրադարձել են մեկ անգամ: Եթե տվյալ քաղաքական ուժը (նաեւ առաջին համարը) նշվել է եւ դրական, եւ բացասական համատեքստում, ապա արձանագրվում է, որ անդրադարձը եղել է չեզոք:

**1.2.** Բանավիճային հեռուստահաղորդումներում (ներառյալ՝ բանավեճեր, նախընտրական հարցազրույց(ներ) քաղաքական ուժերին անդրադարձ կատարելու (լրատվամիջոցի ներկայացուցչի ու հեռուստահաղորդման հյուրի կողմից) հաճախականությունից զատ, նաեւ հաշվի է առնվել հաղորդավարի պահվածքը՝ կողմնակալ բարենպաստ, կողմնակալ անբարենպաստ կամ անաչառ վերաբերմունք գրուցակցի նկատմամբ (եթե գրուցակիցը Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցող քաղաքական ուժի ներկայացուցիչ է), թե ինչ տոնայնություն է օգտագործվել հարցեր տալու ժամանակ, ինչպիսի «հարմար» կամ «անհարմար» հարցեր են գերակայել, ինչ հաճախականությամբ են ընդհատվել հյուրի պատասխանները եւ այլն:

**2.** Հասկանալ, թե լուսաբանման ժամանակ տվյալ քաղաքական ուժի նկատմամբ **թեմատիկ որ շեշտադրումն** է գերակայել, այսինքն արձանագրվել է, թե ընտրություններին մասնակցող տվյալ քաղաքական ուժին կամ նրա ցուցակի առաջին համարին (քաղաքապետի թեկնածուին) անչլող հեռուստանյութի ժամանակ որ թեման է գերակշռել (ընդհանուր քաղաքական հարցե՞րը, թե՞ քաղաքի հիմնախնդիրներին վերաբերող հարցերը): Եթե ակնհայտ գերակայություն չի նկատվել, համապատասխան հեռուստանյութը որակվել է որպես «անդրադարձ բոլոր թեմաներին»: «Այլ» սյունակի ներքո հաշվի են առնվել այս թեմաներից դուրս արված՝ գլխավորապես տեխնիկական բնույթի հարցերին վերաբերող շեշտադրումները:



**3. Հասկանալ, թե քարոզարշավի լուսաբանման ժամանակ որքանով են պահպանվել լրագրողական էթիկայի նորմերը:** Ընդ որում, մշտադիտարկող խումբը հիմնվել է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի 7-րդ՝ «Ազնվություն ընտրությունները եւ հանրաքվեները լուսաբանելիս» բաժնի վրա:

Ի հավելումս Կանոնագրի դրույթների, որոնք պահանջում են լուսաբանման ժամանակ ապահովել հավասարակշռված մոտեցում եւ հավասար հնարավորություններ, մշտադիտարկող խումբն իր աշխատանքի ընթացքում նպատակ է ունեցել պարզել, թե որքանով են պահպանվել հետեւյալ կետերը՝

- լինել հանդուրժող բոլոր կուսակցությունների եւ թեկնածուների նկատմամբ,
- զերծ մնալ վիրավորանքներից,
- չծաղրել կուսակցությունների, թեկնածուների տեսակետներն ու կարծիքները,
- չհրապարակել նյութեր, որոնք պարունակում են գրպարտություն, շանտաժ եւ սպառնալիք կուսակցությունների եւ թեկնածուների նկատմամբ:

Այդ նպատակով հետազոտության ընթացքում հաշվարկվել է, թե որքան հաճախ են օգտագործվել հայաստանյան ներքաղաքական պայքարի հետ կապված կարծրատիպերը, որոնք խնդրահարույց են լրագրողական էթիկայի տեսանկյունից: Այս դեպքում «կարծրատիպ» նշանակում է տարբեր բառերով արտահայտվող, որոշակի հաճախականությամբ կրկնվող նույն մտքերը, գաղափարները, որոնք ունեն բացասական, վիրավորական բովանդակություն կամ ենթատեքստ: Հետազոտության ընթացքում մշտադիտարկող խումբը հաշվի է առել միայն այդ բնույթի կարծրատիպային արտահայտությունները (դավաճան, կոռոււմպացված պաշտոնյա, «հինգերորդ շարասյան» ներկայացուցիչ եւ այլն):

Համաձայն հետազոտության նախնական փուլի, որն առանձնացրել էր այն հիմնական թեմաները, որոնցում վիրավորական բովանդակությամբ կարծրատիպերն առավել հաճախ են հանդիպում, մշտադիտարկող խումբը կարծրատիպերը բաժանել է երեք խմբի.

**3.1. Գործող իշխանության ներկայացուցիչներին ուղղված** վիրավորական այնպիսի կարծրատիպեր, ինչպիսիք են «դավաճանություն», «հողերը հանձնել», «կապիտուլյացիա», «մեղավոր են Հայաստանին ու Արցախին պատուհասած դժվարությունների ու դժբախտությունների համար», «ազգին կործանման տանող գործողություններ են իրականացրել», «երկիրն անարդյունավետ են կառավարում», «ձախողել են երկրի կառավարումը»:

**3.2. Նախկին (մինչեւ 2018թ. մայիսի 8-ը) իշխանություններին (ներկայումս՝ քաղաքական ընդդիմության մի զգալի մասին) հասցեագրված** վիրավորական կարծրատիպեր՝ «երկիրը ղեկավարելիս եղել են կոռոււմպացված», «բնակչությանը կողոպտել են ու բռնությունների ենթարկել», «նրանք են մեղավոր 44-օրյա պատերազմի հետեւանքների համար»:

**3.3. Հանրության տարբեր շերտերի ներկայացուցիչների վերաբերյալ** վիրավորական կարծրատիպեր՝ «գործում են հօգուտ այլ պետությունների, ի վնաս Հայաստանի շահերի», «օտարերկրյա գործակալներ են, լրտեսներ, «հինգերորդ շարասյան» ներկայացուցիչներ»:

Վիրավորական կարծրատիպերը հաշվարկվել են հետեւյալ սկզբունքով. եթե մեկ հեռուստանյութի ընթացքում մեկ եւ ավելի անգամ օգտագործվել է վերոհիշյալ երեք

խմբերից որեւէ մեկին վերաբերող վիրավորական կարծրատիպ, ապա համարվել է, որ օգտագործվել է այդ խմբի մեկ վիրավորական կարծրատիպ: Բացի այդ, արձանագրվել է, թե ով է եղել այդ կարծրատիպի հիմնական հաղորդողը՝ լրագրողը (հրապարակման հեղինակը/հաղորդաչարի հեղինակը եւ այլն), թե՛ հյուրը (հարցազրույցի մասնակիցը, լրագրողի՝ նյութում հիշատակված անձը եւ այլն): Նշվել է նաեւ, թե արդյոք այդ հեռուստանյութի ժամանակ ներկայացվել են մեղադրանքները հաստատող փաստեր, տեղեկություններ, փաստարկներ:

# | Մշտադիտարկման առարկա լրատվամիջոցները

## 1. «Արմենիա» ([www.armeniatv.am](http://www.armeniatv.am))

Մշտադիտարկման առարկա են եղել՝

- «Ժամը» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ),
- դիտարկվել են նաեւ սեպտեմբերի 16-ի եւ 17-ի («լռության» եւ ընտրության օրեր) թողարկումները:

## 2. «Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք» ([www.1tv.am](http://www.1tv.am))

Մշտադիտարկման առարկա են եղել՝

- «Լուրեր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ) եւ «Լուրերի» կիրակնօրյա թողարկումը,
- հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդում՝ «Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ» (երկուշաբթի-ուրբաթ),
- նախընտրական բանավեճ՝ «Երեւանն ընտրում է» (սեպտեմբերի 12-ին, 14-ին),
- դիտարկվել են նաեւ սեպտեմբերի 16-ի եւ 17-ի («լռության» եւ ընտրության օրեր) թողարկումները:

## 3. «Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք» ([www.1lurer.am](http://www.1lurer.am))

Մշտադիտարկման առարկա են եղել՝

- հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումներ՝ «Տարբեր կարծիքներ Աստղիկ Սարգսյանի հետ» (երկուշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ), «Հանրային քննարկում» (կիրակի):

## 4. «Հայկական երկրորդ հեռուստաալիք» ([www.tv.am](http://www.tv.am))

Մշտադիտարկման առարկա են եղել՝

- «Լրաբեր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ),
- հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումներ՝ «Խոսքի իրավունք» (երկուշաբթի-ուրբաթ), եւ դիտարկվել է սեպտեմբերի 8-ի «Պրոֆֆակտ» հաղորդումը,
- դիտարկվել են նաեւ սեպտեմբերի 16-ի եւ 17-ի («լռության» եւ ընտրության օրեր) թողարկումները:

## 5. «Երկիր Մեդիա» ([www.yerkirmedia.am](http://www.yerkirmedia.am))

Մշտադիտարկման առարկա են եղել՝

- «Երկիրն այսօր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ) եւ «Կիրակնօրյա Երկիրը»,
- հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդում՝ «Երկրի հյուրասարահը» (երկուշաբթի-շաբաթ),
- դիտարկվել են նաեւ սեպտեմբերի 16-ի եւ 17-ի («լռության» եւ ընտրության օրեր) թողարկումները:

## 6. «Շանթ» ([www.shanttv.com](http://www.shanttv.com))

Մշտադիտարկման առարկա են եղել՝

- «Հորիզոն» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ),
- հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդում՝ «Հեռանկար»,

- դիտարկվել են նաեւ սեպտեմբերի 16-ի եւ 17-ի («լուռության» եւ ընտրության օրեր) թողարկումները:

**7. «1in.am»** ([www.1in.am](http://www.1in.am))

Մշտադիտարկման առարկա են եղել՝

- հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները, որոնք հեռարձակվել են երեկոյան եթերում (21.00-23.00),
- լուրերի երեկոյան թողարկումը,
- նախընտրական հաղորդաշար՝ «Երեւանն ընտրում է»,
- դիտարկվել են նաեւ սեպտեմբերի 16-ի եւ 17-ի («լուռության» եւ ընտրության օրեր) թողարկումները:

**8. «Factor.am»** ([www.factor.am](http://www.factor.am))

Մշտադիտարկման առարկա են եղել՝

- հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումներ՝ «Հարցազրույց», «Քննարկում», «Բանավեճ»,
- դիտարկվել են նաեւ սեպտեմբերի 16-ի եւ 17-ի («լուռության» եւ ընտրության օրեր) թողարկումները:

## | Մշտադիտարկման ամփոփ եւ թվային արդյունքները

Երեւանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների քարոզարշավի համար Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանվեց 2023 թվականի օգոստոսի 23-ից մինչեւ սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածը:

**2023 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 15-ը** ժամանակահատվածում վերոհիշյալ ութ լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում հետազոտության է ենթարկվել

- լրատվական թողարկումների 2 837 հեռուստանյութ,
- բանավիճային 159 հաղորդում:

**2023 թվականի սեպտեմբերի 16-ից սեպտեմբերի 17-ը** ժամանակահատվածում վերոհիշյալ ութ լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում հետազոտության է ենթարկվել

- լրատվական թողարկումների 173 հեռուստանյութ,
- բանավիճային 4 հաղորդում:

### Դիտարկումներ

- Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցող որ քաղաքական ուժերին են առավել հաճախ անդրադարձել:

- Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցող որ քաղաքական ուժերն են առավել հաճախ արժանացել դրական եւ բացասական անդրադարձի:

Մշտադիտարկման թվերը վկայում են, որ Երեւանի ավագանու ընտրությունների լուսաբանման ժամանակ տասնչորս քաղաքական ուժերին կատարված անդրադարձը (լրատվամիջոցի ներկայացուցչի, ռեպորտաժի «հերոսի», հեռուստահաղորդման հյուրի կողմից) ամենեւին հավասարաչափ չի եղել:

Օրինակ, քարոզարշավի ժամանակ (2023 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 15-ը) իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը (Տիգրան Ավինյան) բաժին է հասել հայաստանյան վերոհիշյալ ութ հեռուստաընկերությունների ողջ լուսաբանման գրեթե մեկ քառորդը (23.7%-ը կամ 228 անդրադարձ, տե՛ս Աղյուսակ 2):

«Քաղաքացիական պայմանագրին» եւ նրա թեկնածուին վերաբերող այս թվերը մի կողմից ցույց են տալիս, թե որքան շատ է եղել որոշ լրատվամիջոցների կողմից կառավարող ուժին հասցեագրված քննադատությունը, բայց մյուս կողմից, որ իշխանությունների հանդեպ լոյալ կամ համեմատաբար լոյալ լրատվամիջոցները նույնպես զգալի տեղ են հատկացրել «Քաղաքացիական պայմանագրին» իրենց լուսաբանման ընթացքում՝ գերազանցապես չեզոք բնույթի անդրադարձներով:

Օրինակ, հանրային երկու հեռուստաալիքները՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքը» եւ «Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիքը» քարոզարշավի ժամանակ բոլոր՝ տասնչորս քաղաքական ուժերին անդրադարձել են 245 անգամ (245 հեռուստանյութ՝ ռեպորտաժ եւ հարցազրույց), որից 48-ը կամ 19.5%-ը վերաբերել է միայն կառավարող

ուժին: Այդ 48-ից 3-ը (6.2%) եղել են դրական բնույթի, 14-ը (29.1%)՝ բացասական, իսկ 31-ը (64.6%)՝ չեզոք բնույթի անդրադարձներ:

Ուշագրավ է, որ *քարոզարշավի ժամանակ* ընդհանուր անդրադարձների քանակությամբ «Մայր Հայաստան» դաշինքի (Անդրանիկ Թեւակյան) հետ երկրորդ/երրորդ հորիզոնականները կիսել է «Ապրելու երկիր» կուսակցությունը (Մանե Թանդիլյան) (Աղյուսակ 2): Եվ եթե դիտարկում ենք վերջինիս լուսաբանման կառուցվածքը, նկատում ենք, որ ե՛լ լրատվական թողարկումների, ե՛լ հարցազրույցների գծով «Ապրելու երկիրը» երրորդ տեղում է (բոլոր լրատվական թողարկումների 8.2%-ը եւ բոլոր բանավիճային հաղորդումների 7.8%-ը) (Աղյուսակ 4, 5):

Տասնչորս քաղաքական ուժերի շարքում *միաժամանակ երկու գծով նման բարձր ցուցանիշը* մի կուսակցության («Ապրելու երկիր») պարագայում, որը, չունի իր հետ պաշտոնապես առնչվող լրատվամիջոց(ներ), իշխող ուժ չէ, ոչ էլ շատերի կողմից ընկալվում է որպես երկրում ընդդիմադիր օրակարգն առաջ տանող գլխավոր քաղաքական միավոր, կարող է վկայել, թե այդ ուժը, իրականում, որքան ուշադրություն է հատկացրել լրատվամիջոցների հետ աշխատանքին:

Մշտադիտարկման համաձայն՝ *քարոզարշավի ընթացքում դրական* լուսաբանման ամենից մեծ չափաբաժինն ունեցել է «Մայր Հայաստան» դաշինքը, ընդ որում՝ ե՛լ լրատվական թողարկումների, ե՛լ բանավիճային հաղորդումների գծով (Աղյուսակ 6, 9), իսկ ընդհանուր պատկերը հետեւյալն է՝ ուր ի հեռուստաընկերությունները ընդդիմադիր դաշինքին անդրադարձել են 78 ռեպորտաժներով, որից 11-ը կամ 14.1%-ը եղել է դրական (Աղյուսակ 2):

Ընդդիմադիր այդ ուժին առավել շատ դրական անդրադարձ է կատարվել «Երկիր Մեդիայի» եթերում. հեռուստաընկերությունում «Մայր Հայաստանին» անդրադարձել են (լրատվական թողարկումներ եւ բանավիճային հաղորդումներ) 16 անգամ, որից 5-ը (31.2%)՝ դրական, 11-ը (68.8%)՝ չեզոք, բացասական անդրադարձ չի եղել:

*Քարոզարշավի ժամանակ բացասական* լուսաբանման առումով պատկերն ավելի ցայտուն է: Առաջին հորիզոնականում իշխող՝ «Քաղաքացիական պայմանագիրն» է (ե՛լ լրատվական թողարկումների, ե՛լ բանավիճային հաղորդումների գծով, Աղյուսակ 7, 10): Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորած ուժին ուր լրատվամիջոցներն, ընդհանուր առմամբ, անդրադարձել են 228 անգամ, որից 99-ը կամ 43.4%-ը՝ բացասաբար (Աղյուսակ 2):

Այս իմաստով՝ «առաջատարն» է «Երկիր Մեդիան» . հեռուստաընկերությունում իշխող ուժին անդրադարձ է կատարվել 24 անգամ, որից 19-ի (79.1%) դեպքում՝ բացասական, 5-ի (20.9%) դեպքում՝ չեզոք: Դրական անդրադարձ չի եղել:

Երկրորդ հորիզոնականում «Ազգային առաջընթաց» (Հայկ Մարության) կուսակցությունն է. ուր ի հեռուստաընկերությունների ընդհանուր 70 անդրադարձներից 12-ը կամ 17.1%-ը՝ բացասական (Աղյուսակ 2):

Եթե դիտարկենք լրատվամիջոցների անդրադարձների կառուցվածքը, ապա պարզ է դառնում, որ «Քաղաքացիական պայմանագրից» ու «Ազգային առաջընթացից» զատ, այլ՝ 12 քաղաքական ուժերից որեւիցե մեկին ուր լրատվամիջոցները բացասական բնույթի հրապարակմամբ չեն անդրադարձել (Աղյուսակ 7):

Բանավիճային հաղորդումների պարագայում բացասական անդրադարձների թվով երրորդ հորիզոնականում «Ապրելու երկիր» կուսակցությունն է՝ 21 անդրադարձից 3-ը (14.3%) բացասական է (Աղյուսակ 10):

Ուշադրություն է գրավում, որ բացասական բնույթի անդրադարձներն, ընդհանուր առմամբ, ավելի բարձր թիվ ունեն, քան դրականները, ինչը թույլ է տալիս դատողություն անելու, որ քարոզարշավի ժամանակ լրատվամիջոցներն ու քաղաքական ուժերը համեմատաբար ավելի շատ կենտրոնացել են քննադատության, քան տարաբնույթ խնդիրների վերաբերյալ հանրությանը հետաքրքրող լուծումների ներկայացման ուղղությամբ:

Թե ութ հեռուստաընկերությունների *լրատվական թողարկումներում* ինչու են բացասական անդրադարձի արժանացել ընտրություններին մասնակցող 14 քաղաքական ուժերից միայն երկուսը՝ «Քաղաքացիական պայմանագիրն» ու «Ազգային առաջընթացը», ուշադրության արժանի հարց է: Եթե առաջինի դեպքում նման հանգամանքը «հասկանալի» է, քանզի գործ ունենք իշխող ուժի հետ, ապա արդյո՞ք «Քաղաքացիական պայմանագրից» զատ, միայն Հայկ Մարությանի գլխավորած ուժի հայտնվելը նման ցանկում վկայում է, որ իշխող կուսակցության հետ մեկտեղ մյուս ուժերը նույնպես հենց «Ազգային առաջընթացն» էին ընկալում որպես գլխավոր մրցակից, եւ այս դիրքորոշումն էլ իր «արտացոլումն» է գտել լրատվամիջոցների աշխատանքում:

Մշտադիտարկման արդյունքում պարզ դարձավ, որ քարոզարշավի ընթացքում քաղաքական ուժերի դրական լուսաբանումը կամ հաճախակի անդրադարձը ամենեւին էլ չի նշանակում, թե դա հանգեցնելու էր ցանկալի արդյունքի:

Ակնհայտ օրինակներից են «Քաղաքացիական պայմանագրի», «Ազգային առաջընթացի» եւ, առավել եւս, «Հանրային ձայնի» (Արտակ Գալստյան) թվերը: Օրինակ, «Հանրային ձայնը» զրո դրական անդրադարձի պայմաններում քաղաքական 14 ուժերի շարքում արժանանալով ամենից սակավ լուսաբանումներից մեկին (այդ ցուցանիշով նախավերջին հորիզոնականում է), կարողացավ հաղթահարել ընտրական շեմը ու Երեւանի 65 տեղանոց ավագանիում զբաղեցնել 7 աթոռ (Աղյուսակ 1, 2):

Մյուս կողմից՝ ունենք «Ապրելու երկիր» կուսակցության օրինակը, երբ լրատվամիջոցների ընդհանուր մեծաթիվ անդրադարձների (այդ ցուցանիշով «Մայր Հայաստանի» հետ կիսում է երկրորդ-երրորդ հորիզոնականները) եւ դրական լուսաբանման (1.3% / 7-րդ հորիզոնական) պարագայում, միեւնույն է, չանցավ ավագանի (Աղյուսակ 1, 2):

Եթե «Ազգային առաջընթացի» (Երեւանի ավագանիում ձեւավորել է մեծությամբ երկրորդ խմբակցությունը) ու «Հանրային ձայնի» թվերը քաղաքական առումով կարելի է բացատրել այն վարկածով, թե հանրությունը նոր դերակատարների պահանջ ունի, ապա պակաս կարեւոր չէ այս ամենի մեղիա բաղկացուցիչը: Երկու կուսակցություններն էլ իրենց քարոզարշավի գերակշիռ մասը առաջ էին տանում ոչ թե ավանդական լրատվամիջոցների (հեռուստատեսություն, ռադիո, տպագիր մամուլ, կայքէջեր) միջոցով, այլ՝ շեշտը դնում էին սոցմեդիայի վրա: Եթե գալիք ընտրություններում այս միտումը շարունակվի, ապա ավելի հիմնավորված կարող ենք խոսել, մասնավորապես, ընտրական գործընթացների ժամանակ ավանդական մեդիայի ազդեցության շարունակվող թուլացման մասին:

**Աղյուսակ 2**

Քարոզարշավի ընթացքում (2023 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 15-ը)						
№	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լուսաբանման անվանում (ցուցակի առաջին համարը)  <i>Երեւանի ավագանի անցած քաղուժեր</i>	Լրատվական թողարկումների եւ բանավիճային հաղորդումների ժամանակ <i>տվյալ</i> քաղուժին ընդհանուր անդրադարձների քանակը (բոլոր քաղուժերին ընդհանուր անդրադարձի նկատմամբ <i>տվյալ</i> քաղուժին արված անդրադարձների տոկոսային հարաբերա- կցությունը)	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լուսաբանման անվանում (ցուցակի առաջին համարը)  <i>Երեւանի ավագանի անցած քաղուժեր</i>	Լրատվական թողարկումների եւ բանավիճային հաղորդումների ժամանակ <i>տվյալ</i> քաղուժին դրական (+) անդրադարձների քանակը ( <i>տվյալ</i> քաղուժին արված ընդհանուր անդրադարձների նկատմամբ դրական անդրադարձների տոկոսային հարաբերա կցությունը)	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լուսաբանման անվանում (ցուցակի առաջին համարը)  <i>Երեւանի ավագանի անցած քաղուժեր</i>	Լրատվական թողարկումների եւ բանավիճային հաղորդումների ժամանակ <i>տվյալ</i> քաղուժին բացասական (-) անդրադարձների քանակը ( <i>տվյալ</i> քաղուժին արված ընդհանուր անդրադարձների նկատմամբ բացասական անդրադարձների տոկոսային հարաբերա կցությունը)
1.	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն (Տիգրան Ավինյան)	228 (23.7%)	«Մայր Հայաստան» դաշինք (Անդրանիկ Թեւանյան)	11 (14.1%)	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն (Տիգրան Ավինյան)	99 (43.4%)
2.	«Ապրելու երկիր» կուսակցություն (Մանե Թանդիլյան)	78 (8.1%)	«Հանրապետություն» կուսակցություն (Արտակ Չեյնալյան)	5 (9.2%)	«Ազգային առաջընթաց» կուսակցություն (Հայկ Մարության)	12 (17.1%)
3.	«Մայր Հայաստան» դաշինք (Անդրանիկ Թեւանյան)	78 (8.1%)	«Ուժը հայրենյաց» կուսակցություն (Նեյի Հարությունյան)	2 (4.1%)	«Ապրելու երկիր» կուսակցություն (Մանե Թանդիլյան)	3 (3.8%)
4.	«Ազգային առաջընթաց» կուսակցություն (Հայկ Մարության)	70 (7.3%)	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն (Տիգրան Ավինյան)	9 (3.9%)	«Մայր Հայաստան» դաշինք (Անդրանիկ Թեւանյան)	2 (2.5%)
5.	«Արդար Հայաստան» կուսակցություն (Նորիկ Նորիկյան)	58 (6%)	«Հայաստանի եվրոպական կուսակցություն» (Տիգրան Խզմալյան)	1 (2.9%)	«Հանրապետություն» կուսակցություն (Արտակ Չեյնալյան)	1 (1.8%)
6.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն (Դավիթ Խաժակյան)	58 (6%)	«Ազգային առաջընթաց» կուսակցություն (Հայկ Մարության)	1 (1.4%)	«Հայաստանի եվրոպական կուսակցություն» (Տիգրան Խզմալյան)	0 (0%)



7.	«Չանրապետություն» կուսակցություն (Արտակ Չեյնայան)	54 (5.9%)	«Ապրելու երկիր» կուսակցություն (Մանե Թանդիլյան)	1 (1.3%)	«Լուսավոր Չայաստան» կուսակցություն (Դավիթ Խաժակյան)	0 (0%)
8.	«Միացյալ Չայաստան» կուսակցություն (Երվանդ Թարվերդյան)	53 (5.7%)	«Լուսավոր Չայաստան» կուսակցություն (Դավիթ Խաժակյան)	0 (0%)	«Արդար Չայաստան» կուսակցություն (Նորիկ Նորիկյան)	0 (0%)
9.	«Ուժը հայրենյաց» կուսակցություն (Նելլի Չարությունյան)	49 (5.3%)	«Արդար Չայաստան» կուսակցություն (Նորիկ Նորիկյան)	0 (0%)	«Միացյալ Չայաստան» կուսակցություն (Երվանդ Թարվերդյան)	0 (0%)
10.	«Չաղթանակ» կուսակցություն (Վիկտոր Մնացականյան)	47 (4.9%)	«Միացյալ Չայաստան» կուսակցություն (Երվանդ Թարվերդյան)	0 (0%)	«Չանրային ձայն» կուսակցություն (Արտակ Գալստյան)	0 (0%)
11.	«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն (Սուրեն Պետրոսյան)	43 (4.4%)	«Չաղթանակ» կուսակցություն (Վիկտոր Մնացականյան)	0 (0%)	«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն (Սուրեն Պետրոսյան)	0 (0%)
12.	«Չանուն սոցիալական արդարության» կուսակցություն (Արման Ղուկասյան)	41 (4.2%)	«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն (Սուրեն Պետրոսյան)	0 (0%)	«Չաղթանակ» կուսակցություն (Վիկտոր Մնացականյան)	0 (0%)
13.	«Չանրային ձայն» կուսակցություն (Արտակ Գալստյան)	37 (3.8%)	«Չանուն սոցիալական արդարության» կուսակցություն (Արման Ղուկասյան)	0 (0%)	«Ուժը հայրենյաց» կուսակցություն (Նելլի Չարությունյան)	0 (0%)
14.	«Չայաստանի եվրոպական կուսակցություն» (Տիգրան Խզմայան)	34 (3.5%)	«Չանրային ձայն» կուսակցություն (Արտակ Գալստյան)	0 (0%)	«Չանուն սոցիալական արդարության» կուսակցություն (Արման Ղուկասյան)	0 (0%)
15.	Այլ	30 (3.1%)	Այլ	0 (0%)	Այլ	1 (3.3%)
	ԸՆԴԱՄԵՆԸ	958 (100%)	ԸՆԴԱՄԵՆԸ դրական անդրադարձ՝ բոլոր քաղուժերին (բոլոր քաղուժերին ընդհանուր անդրադարձի %-ը)	30 (3.1%)	ԸՆԴԱՄԵՆԸ բացասական անդրադարձ՝ բոլոր քաղուժերին (բոլոր քաղուժերին ընդհանուր անդրադարձի %-ը)	118 (12.3)

## **Դիտարկումներ**

- Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավի, «լռության օրը» եւ ընտրությունների օրը ինչ թեմատիկ շեշտադրումներ են գերակշռել, երբ անդրադարձ է կատարվել քաղաքական ուժերին

Թեեւ քարոզարշավի ժամանակ (2023 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 15-ը) ավելի շատ խոսվել է Երեւանի հիմնախնդիրների մասին (ողջ անդրադարձի 42.2%-ը), սակայն զգալի տեղ է հատկացվել նաեւ ընդհանուր քաղաքական հարցերին (ողջ անդրադարձի 29.1%-ը) (Աղյուսակ 3):

Սա հատկապես ուշագրավ է ավագանու ընտրությունների արդյունքում առաջին երկու հորիզոնականները զբաղեցրած ուժերի՝ «Քաղաքացիական պայմանագիր» եւ «Ազգային առաջընթաց» կուսակցությունների պարագայում: Չնայած երկուսն էլ ընդգծում էին, որ ավագանու ընտրություններին ընդամառ իրենց համար առաջնայինը մայրաքաղաքային խնդիրներն են, անգամ՝ բացառապես մայրաքաղաքային խնդիրներն ու ծրագրերը, սակայն փաստն այն է, որ «Քաղաքացիական պայմանագրի» ու «Ազգային առաջընթացի» պարագայում ավելի շատ անդրադարձ է արվել ընդհանուր քաղաքական հարցերին (Աղյուսակ 3):

Մյուս դիտարկումն այն է, որ Երեւանի ավագանիում ավելի շատ տեղ են ստացել այն ուժերը, որոնք ավելի շատ են անդրադարձել ընդհանուր քաղաքական հարցերին, կամ որոնց վերաբերող լուսաբանումն ընթացել է այդ կոնտեքստում: Սա օրինաչափ է ավագանիում մեծությամբ առաջին երեք խմբակցությունների պարագայում («Քաղաքացիական պայմանագիր», «Ազգային առաջընթաց», «Մայր Հայաստան»):

Հաջորդ օրինաչափությունն այն է, որ քարոզարշավի ընթացքում ընդհանուր քաղաքական հարցերին ավելի շատ անդրադարձ կատարած ուժերն են ստացել առավել բացասական լուսաբանում (Աղյուսակ 2, 3):

Իրենց քարոզարշավը գերազանցապես Երեւանի հիմնախնդիրների շուրջ կառուցած քաղաքական ուժերը նկատելիորեն քիչ (մեկ տոկոսից փոքր ինչ ավելի) ձայն են ստացել ավագանու ընտրությունների արդյունքում: Այս դիտարկումը նախեւառաջ վերաբերում է «Հաղթանակ» (Վիկտոր Մնացականյան), «Լուսավոր Հայաստան» (Դավիթ Խաժակյան) եւ «Հանուն սոցիալական արդարության» (Արման Ղուկասյան) կուսակցություններին, որոնց պարագայում գերակշռում են մայրաքաղաքային թեմաները (Աղյուսակ 3):

### Աղյուսակ 3

№	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանում (ցուցակի առաջին համարը)	Երեւանի ավագանու ընտրություն- ների արդյունքում ստացած ընդհանուր քվեների տոկոսային չափաբաժինը (ավագանիում ստացած տեղերի քանակը)	Լրատվական թողարկումների եւ բանավիճային հաղորդումների ժամանակ առավել հաճախ անդրադարձը քաղուժերին	Թեմատիկ շեշտադրումներ			
				Ընդհանուր քաղաքական	Երեւանի հիմնախնդիրներ	Անդրադարձ բոլոր թեմաներին (եւ՝ ընդհանուր քաղաքական, եւ՝ քաղաքի հիմնախնդիրներին)	Այլ (տեխնիկա- կան բնույթի հարցեր)
1.	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն (Տիգրան Ավինյան)	32.57% (24)	228	91 (39.9%)	82 (35.9%)	30 (13.3%)	25 (10.9%)
2.	«Ազգային առաջընթաց» կուսակցություն (Հայկ Մարուքյան)	18.89% (14)	70	26 (37.1%)	25 (35.7%)	12 (17.2%)	7 (10%)
3.	«Մայր Հայաստան» դաշինք (Անդրանիկ Թեւանյան)	15.45% (12)	78	53 (67.9%)	9 (11.6%)	11 (14.1%)	5 (6.4%)
4.	«Հանրապետություն» կուսակցություն (Արտակ Չեյնայան)	11.32% (8)	54	6 (11.1%)	25 (46.3%)	23 (42.6%)	0 (0%)
5.	«Հանրային ծայն» կուսակցություն (Արտակ Գալստյան)	9.68% (7)	37	11 (29.8%)	14 (37.8%)	9 (24.3%)	3 (8.1%)
6.	«Աարելու Երկիր» կուսակցություն (Մանե Թանդիլյան)	3.64% (0)	78	23 (29.5%)	26 (33.4%)	25 (32%)	4 (5.1%)
7.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն (Դավիթ Խաժակյան)	1.80% (0)	58	4 (6.9%)	44 (75.9%)	10 (17.2%)	0 (0%)
8.	«Հաղթանակ» կուսակցություն (Վիկտոր Մնացականյան)	1.71% (0)	47	2 (4.2%)	39 (82.9%)	4 (8.6%)	2 (4.3%)

9.	«Արդար Հայաստան» կուսակցություն (Նորիկ Նորիկյան)	1.12% (0)	58	14 (24.1%)	24 (41.4%)	19 (32.8%)	1 (1.7%)
10.	«Հայաստանի Եվրոպական կուսակցություն» (Տիգրան Խզմայան)	1.11% (0)	34	2 (5.9%)	19 (55.9%)	11 (32.3%)	2 (5.9%)
11.	«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն (Սուրեն Պետրոսյան)	1.01% (0)	43	26 (60.5%)	7 (16.3%)	10 (23.2%)	0 (0%)
12.	«Ուժը հայրենյաց» կուսակցություն (Նելլի Հարությունյան)	0.74% (0)	49	6 (12.2%)	28 (57.2%)	13 (26.5%)	2 (4.1%)
13.	«Միացյալ Հայաստան» կուսակցություն (Երվանդ Թարվերդյան)	0.55% (0)	53	4 (7.5%)	30 (56.6%)	16 (30.2%)	3 (5.7%)
14.	«Հանուն սոցիալական արդարության» կուսակցություն (Արման Ղուկասյան)	0.34% (0)	41	2 (4.9%)	28 (68.3%)	11 (26.8%)	0 (0%)
15.	<b>Այլ</b>		<b>30</b>	<b>8 (26.6%)</b>	<b>4 (13.4%)</b>	<b>0 (0%)</b>	<b>18 (60%)</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>			<b>958</b>	<b>278 (29.1%)</b>	<b>404 (42.2%)</b>	<b>204 (21.2%)</b>	<b>72 (7.5%)</b>

## **Դիտարկումներ**

- Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավի, «լռության օրը» եւ ընտրությունների օրը լուսաբանման ժամանակ հաղորդավարների կողմից առավել դրական (ընդգծված համակրանք), բացասական (ընդգծված հակակրանք) եւ չեզոք (անկողմնակալ) վերաբերմունքի արժանացած քաղաքական ուժերը

Փաստորեն, քարոզարշավի ընթացքում, «լռության օրը» եւ ընտրությունների օրը հաղորդավարների կողմից չեզոքությունը խախտող միայն մեկ անդրադարձ (այս դեպքում՝ ընդգծված բացասական վերաբերմունք) է եղել: Այն վերաբերել է իշխող՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը եւ տեղ է գտել «Հայկական երկրորդ հեռուստատալիքի» եթերում (Աղյուսակ 20, 21):

## **Դիտարկումներ**

- Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավի, «լռության օրը» եւ ընտրությունների օրը լուսաբանման ժամանակ կիրառված վիրավորական կարծրատիպերը

Քարոզարշավի ընթացքում, «լռության օրը» եւ ընտրությունների օրը կիրառված վիրավորական կարծրատիպերը գլխավորապես վերաբերել են գործող իշխանությանը (ընդհանուրի քանակի 88.3%, Աղյուսակ 22, 23): Այստեղից էլ պարզ է դառնում, թե այդ վիրավորական կարծրատիպերն ինչու են գերազանցապես տեղ գտել իշխանությունների նկատմամբ խիստ քննադատական մոտեցում որդեգրած հեռուստաընկերությունների՝ «Հայկական երկրորդ հեռուստատալիքի» (ուրբ լրատվամիջոցներում տեղ գտած վիրավորական բոլոր կարծրատիպերի 56.6%-ը) եւ «Երկիր Մեդիայի» (ուրբ լրատվամիջոցներում տեղ գտած վիրավորական բոլոր կարծրատիպերի 25%-ը) եթերներում:

Մյուս կողմից՝ լրագրողական Էթիկային առավել հավատարիմ են գտնվել «Արմենիան», «1in.am»-ը եւ «Շանթը»:

**ՀԱՎԵԼՎԱԾ**  
*թվային տվյալներ*

## Թվային տվյալներ

- Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցող որ քաղաքական ուժերին են առավել հաճախ անդրադարձել
- Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցող որ քաղաքական ուժերին են առավել հաճախ դրական, բացասական, կամ չեզոք անդրադարձ կատարել

Երեւանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների քարոզարշավի լուսաբանման ժամանակ (2023 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 15-ը) առավել հաճախ անդրադարձ է կատարվել հետևյալ քաղաքական ուժերին (կուսակցություն, դաշինք)՝

- լրատվական թողարկումների ժամանակ՝ տե՛ս Աղյուսակ 4,
- բանավիճային հաղորդումների ժամանակ՝ տե՛ս Աղյուսակ 5:

### Աղյուսակ 4

№	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանում (ցուցակի առաջին համարը)	Լրատվական թողարկումների ժամանակ առավել հաճախ անդրադարձը քաղուժերին
1.	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն (Տիգրան Ավինյան)	162
2.	«Մայր Հայաստան» դաշինք (Անդրանիկ Թեւանյան)	58
3.	«Ապրելու երկիր» կուսակցություն (Մանե Թանդիլյան)	57
4.	«Արդար Հայաստան» կուսակցություն (Նորիկ Նորիկյան)	44
5.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն (Դավիթ Խաժակյան)	42
6.	«Հանրապետություն» կուսակցություն (Արտակ Չեյնալյան)	41
7.	«Միացյալ Հայաստան» կուսակցություն (Երվանդ Թարվերդյան)	40
8.	«Ազգային առաջընթաց» կուսակցություն (Հայկ Մարության)	39
9.	«Ուժը հայրենյաց» կուսակցություն (Նելլի Հարությունյան)	39
10.	«Հաղթանակ» կուսակցություն (Վիկտոր Մնացականյան)	37
11.	«Հանուն սոցիալական արդարության» կուսակցություն (Արման Դուկասյան)	34
12.	«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն (Սուրեն Պետրոսյան)	33

13.	«Յանրային ձայն» կուսակցություն (Արտակ Գալստյան)	26
14.	«Յայաստանի եվրոպական կուսակցություն» (Տիգրան Խզմայլյան)	21
15.	<b>Այլ</b>	<b>18</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>691</b>

### Աղյուսակ 5

№	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանում (ցուցակի առաջին համարը)	Բանավիճային հաղորդումների ժամանակ առավել հաճախ անդրադարձը քաղուժերին
1.	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն (Տիգրան Ավինյան)	66
2.	«Ազգային առաջընթաց» կուսակցություն (Յայկ Մարության)	31
3.	«Ապրելու երկիր» կուսակցություն (Մանե Թանդիլյան)	21
4.	«Մայր Յայաստան» դաշինք (Անդրանիկ Թեւակյան)	20
5.	«Լուսավոր Յայաստան» կուսակցություն (Դավիթ Խաժակյան)	16
6.	«Արդար Յայաստան» կուսակցություն (Նորիկ Նորիկյան)	14
7.	«Յայաստանի եվրոպական կուսակցություն» (Տիգրան Խզմայլյան)	13
8.	«Յանրապետություն» կուսակցություն (Արտակ Չեյնայլյան)	13
9.	«Միացյալ Յայաստան» կուսակցություն (Երվանդ Թարվերդյան)	13
10.	«Յանրային ձայն» կուսակցություն (Արտակ Գալստյան)	11
11.	«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն (Սուրեն Պետրոսյան)	10
12.	«Յաղթանակ» կուսակցություն (Վիկտոր Մնացականյան)	10
13.	«Ուժը հայրենյաց» կուսակցություն (Նելլի Յարությունյան)	10
14.	«Յանուն սոցիալական արդարության» կուսակցություն (Արման Ղուկասյան)	7
15.	<b>Այլ</b>	<b>12</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>267</b>



Երեւանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների *քաղաքապետի* լուսաբանման ժամանակ (2023 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 15-ը) առավել հաճախ (տվյալ քաղուծի ընդհանուր լուսաբանման համեմատ, %) դրական, բացասական կամ չեզոք անդրադարձ է կատարվել հետեւյալ քաղաքական ուժերին (կուսակցություն, դաշինք)`

- լրատվական թողարկումների ժամանակ` տե՛ս Աղյուսակ 6, 7, 8,
- բանավիճային հաղորդումների ժամանակ` տե՛ս Աղյուսակ 9, 10, 11:

**Աղյուսակ 6**

